ԱՐԱՔՍ

# ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԷՋ

ՅՈՒՆՎԱՐ 1994 (ԴԷՅ 1372) ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԱՐ ՀԱՏԱՎԱՃԱՌ 300 ՌԻԱԼ



## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

# 1994

### ՏՕՆԱԾԱՌԻ ԵՐԳԸ

*Հագած կանաչ, փշոտ գլխարկ,*
*Կանաչ շորեր շողշողուն,*
*Ես մի ծառ եմ մէջքս բարակ,*
*Վրաս զարդեր պսպղուն:*

*Իմ ուսերին ի՞նչ սիրունիկ*
*Խաղալիքներ կան պէս-պէս*
*Փայլուն աստղեր, ձի ու ձկնիկ,*
*Մեծ տիկնիկներ վարդերես:*

*Ոսկէ ընկոյզ, արծաթ նուէր*
*Եւ կողովներ գոյնզգոյն,*
*Իսկ ճիւղերիս տակ ծանրաբեռ*
*Ձմեռ պապին ժպտերես:*

- Պողոսեան

*Սիրելի փոքրիկ բարեկամներս*

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒՄ ԵՄ ԲՈԼՈՐԻԴ ՆՈՐ ՏԱՐԻՆ

***Գիտեմ անհամբեր սպասում էիք իմ գալուն,չէ որ ես ինձ հետ բերում եմ ուրախութիւն, ցնծութիւն , երգ ու պար:***

***Ահա եկայ պարկս լի խաղալիքներով ու ձեր սիրած նուէրներով, սակայն նախքան ձեր նուէրների բաշխումը եկէք միասին պարենք, երգենք եւ ուրախ օրեր մաղթենք միմիանց:***



# ՁՆԷ ՄԱՐԴ

Երկու վլոր
Ձնագունդ,
Մէկը՝ գլուխ,
Մէկը՝ փոր,
Աչքի տեղակ՝
Քարածուխ,
Իսկ բերանը՝
Մի խնձոր:
Քթի տեղակ՝
Մի գազար,
Գլխարկի տեղ՝
Մի մեծ դոյլ,
Իսկ մազերը՝
Ծղօտ, հարդ:
Նայում է լուռ
Ու անթարթ:
Ա՜յ քեզ հրաշք
Ձնէ մարդ

*Ս.Շեկոյեան*



# ՆՈՐ ՏԱՐԻ



Այդ ես եմ գալիս զւարթ երգերով,
Գալիս եմ հեռւից, ոսկէ կառքերով,
Այդ ես եմ գալիս, եւ մի գիշերում
Սեղանն է լցւում ընտիր մրգերով:



Այդ ես եմ գալիս, գիշերւայ կէսին,
Փողոցն է լցւում լոյսերով պայծառ,
Այդ ես եմ գալիս, եւ մի գիշերում
Եղեւնիներն են դառնում տօնածառ:



Գալիս եմ հեռւից, լիքը պարկերով,
Պարկերը ծանր են եւ ընկնում են ցած,
Դու դուրս ես գալիս եւ օգնում ես ինձ՝
Մի ամբողջ տարով արդէն մեծացած:

Արմէն Շեկոյեան

# ՁՆԷ ՄԱՐԴԸ ԽԱՂԱԼ Է ՈՒԶՈՒՄ

Ծիտն անցնում էր բանջարանոցով, հանդիպեց ձնեմարդուն:



- Այդ ու՞ր,- հարցրեց ձնէ մարդը:
- Գնում եմ երազումս տեսած կորեկը գտնելու:
- Իսկ ինձ հետ չէի՞ր ցանկանայ մի քիչ խաղալ. ես քեզ կը տամ իմ գեղեցիկ դոյլէ գլխարկը:
- Ինչի՞ս է պէտք քո դոյլէ գլխարկը, երբ նրա մէջ ուտելու ոչինչ չկայ, -ասաց ծիտը:
- Ես քեզ թոյլ կը տամ իմ քթից մի քիչ կծես, չէ՞ որ նա ամենահսկական դդումի պոչից է սարքւած, -աւելացրեց ձնէ մարդը:
- Չեմ ուզում քո դդումի պոչ քիթը, դա արդէն չորացել է, ուտել չի լինի. աւելի լաւ է գնամ երազումս տեսած կորեկը գտնեմ:

Վշտացաւ ձնէ մարդը եւ կարտասւէր, եթէ այդ պահին չյայտնւէր աղւէսը:

- Աղւէս քոյրիկ, այդ ու՞ր այդպէս գողէ-գող...
- Գնում եմ մօրաքոյր սագի մօտ ճաշ-կերոյթի, -պատասխանեց աղւէսը:
- Իսկ ինձ հետ չէի՞ր ցանկանայ մի քիչ խաղալ. այ, ձեռքիս ցախաւելը քեզ կը տամ:
- Ի՞նչ եմ անելու ցախաւելը. նա ինձ չի կշտացնի:

Ու գնաց:





Մեկ էլ հոպ՝ սպիտակ ու փափլիկ ճագարը:
Ուրախացաւ ձնէ մարդը, գուցէ ճագարը կը խաղայ իր հետ: Բայց նա էլ էր քաղցած եւ ինչ որ տեղ էր շտապում:



Յետոյ բանջարանոցով եկան ու անցան՝ հաչան քուչին, մլաւան փիսոն... Երեւի էլի ինչ գիտեմ ովքեր կանցնէին ծիւնածածկ բանջարանոցով, թողնելով այնտեղ իրենց ոտնահետքերն ու վշտացած ձնէ մարդուն, եթէ քնից չարթնանար արեւը:
Արթնացաւ թէ չէ, սարի կատարը բարձրացաւ ու այնտեղից էլ դէպի երկինք:
- Այդ ու՞ր, ծիծաղկոտ արեւ, - ձայն տուեց ձնէ մարդը:



- Ի՞նչ գիտեմ... Ամենուր...
- Իսկ չէի՞ր ցանկանայ ինձ հետ մի քիչ խաղալ, քեզ կը տամ բանջարանոցում ձեան վրայ մնացած կենդանիների ու թռչունների ոտնահետքերը:
- Լաւ, -համաձայնեց արեւն ու սկսեցին խաղալ, գրկախառնուել, գլորուել ձեան մէջ... Նրանց հետ խաղում էին եւ գիւղի բոլոր երեխաները, ու մի այնպիսի քրքիջ էր բարձրացել...
Բայց հենց այդ ժամանակ էլ ձնէ մարդը սկսեց հալուել. վերջում նրանից միայն մի քիչ ջուր մնաց, այն էլ հողը խմեց:

ԿԱՐԼԵՆ ԳԵՈՐԳԵԱՆ





## ԽԱՉԲԱՌ



1- Այս օրերին շատ էք սպանում

2- Ամպի ձայնը

3- Մանուկների սիրած գոյնը

4- Նոր տարւան մեզ հիւր է գալիս

5- Ձեան հատիկները

6- Զուգել

7- Բարձր ծիծաղ





## Ի՞նչ հագնել

Ձմռան եղանակին յարմար հագուստները
գծիկով միացրու այդ եղանակը
ցոյց տուող նկարին:





# Խունուճ _ Մունուճ

Զափաւոր

խօսք եւ երաժշտ.՝ Ս. Գալիկեան



Խունուճ-մունուճ տօնածառ,
Սիրուն, փայլուն տօնածառ,
Մենք քո շուրջն ենք պտտում,
Երգում, պարում ու խնդում:

Ձմեռ պապին շալակին
Նւէր բերեց ամենքին,
Մենք քո շուրջն ենք պտտում,
Երգում, պարում ու խնդում:



Եղջերուն ո՞ր սահնակին է կապած





Միացնելով թւերը գծագրիր ինծ





# Խօսենք ճիշդ եւ գեղեցիկ

Այս օրերին բոլոր տներում լսում ենք Նոր Տարւայ մաղթանքներ ու շնորհաւո-րանքներ: Ամենքը ուրախութեամբ շնորհաւորում ենք իրար Նոր Տարւայ գալուստը: Բայց յաճախ ամենակարճ շնորհաւորանքի մէջ երկու գլխաւոր սխալ ենք թոյլ տալիս:

Շնորհաւոր բառը կրճատւած ու անախորժ դարձած ասւում է **«շնաւոր»**: Սա գե-ղեցիկ չէ եւ չի սազում մանաւանդ ձեզ՝ մեր պատանի ընթերցողներ, դպրոցական աղջիկներ ու տղաներ: Դուք պիտի աւելի մաքուր ու կիրթ խօսէք:

Իսկ երկրորդ բառը **«նոր տարիներտուն»** հնարովի եւ անհարազատ ձեւն է: Այս «տուն» ու «սուն» վերջաւորութիւնը շատ ուրիշ բառերի վերջում էլ անտեղի գործ-ածւում է: Օրինակ ասում են՝ գրքներսուն, ձեռքներտուն, խօսքներտուն, կենացնե-րըտուն եւ այլն: Չգիտեմ որտեղից են եկել այս խորթ ու սխալ **«տուն»** ու **«սունը»**: Միգուցէ պարսկերէնի ազդեցութիւնը լինի (عیدتون، کتابهاتون، دستهاتون): Ինչ որ է, սխալ է եւ պէտք է ասել **ձեր նոր տարին, մեր գրքերը, ձեր ձեռքերը, ձեր խօսքերը, ձեր կենացը** եւ այլն:

## ԳՏԻՐ ՆՈՐ ՏԱՐՒԱՅ ԲԱՌԵՐԸ





| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ձ | Ն | Ե | Մ | Ա | Ր | Դ | Ն |
| Մ | Ս | Ա | Յ | Լ | Ա | Կ | Ո |
| Ե | Ճ | Ձ | Իւ | Ն | Ի | Ջ | Ր |
| Ռ | Ղ | Բ | Ր | Փ | Ն | Ի | Տ |
| Պ | Լ | Ւ | Ե | Գ | Ռ | Ղ | Ա |
| Ծ | Ս | Կ | Ն | Դ | Յ | Տ | Ր |
| Պ | Ճ | Ա | Ր | Ի | Կ | Ս | Ի |
| Ի | Ք | Ի | Լ | Ա | Ղ | Ա | Խ |





ՃԱՐԻԿ ՁՆԵՄԱՐԴ ՁԻՒՆ
ՁՄԵՌՊԱՊԻ ԱՍՏՂ ԵՂԵՒՆԻ
ՅՈՒՆԻԿԱՐ
ՍԱՅԼԱԿ ՆՈՐՏԱՐԻ ԽԱՂԱԼԻՔ
ՆՒԷՐ





Նշւած գոյներով ներկիր լուսամփոփը

1- կարմիր

2- կապոյտ

3- կանաչ

4- դեղին




Ո՞վ է թաքնուած դիմակների ետեւում



# Ձիւն

Ինչ լաւ է, ձիւն
Դու չունես տուն,
Թէ չէ յանկարծ
Խաղը թողած,
Դասը յիշած,
Կը վազէիր
Տունը սիրած։
Այս որ լսեց,
Ձիւնը տխրեց,
- Էհ, մանուկներ,
Դուք գնում էք
Տները ձեր,-
Իսկ ես մենակ
Ձմռան ցրտին
Սպասում եմ
Ձեր գալուստին։

*Էդուարդ Միլիտոնեան*




Օգնիր Նարեկին գտնելու իր սահնակը։





Արքի Ղարիբեան- Նայիրի ուղեցոյց դպրոց



Արփինէ Ծառուկեան-11 տարեկան Իրան փիրուզ դպրոց



Վահէ Ծառուկ[illegible] տարեկան դպրոց



Ադիս Խեչումեան- 5 տարեկան



Ալենուշ Խեչումեան- երրորդ դասարան



Շահինշահրից Ժասմէն Առաքելյան- Երկրորդ դասարան





**ԱՐԱՔՍ**

ԳՐԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

*ԱՐՏՕՆԱՏԷՐ*
ՅԱԿՈԲ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀԱՍՑԷ՝ ՓՈՍՏԱՐԿՂ
16765-1336 ԹԵՀՐԱՆ, ԻՐԱՆ
Հեռ. եւ Հեռապատճէն 839719

**ARAX**
**MONTHLY**
P.O.BOX
16765-1336
TEHRAN_IRAN
Tel & Fax
0098-21-839719

**ماهنامه آراکس**
فرهنگی، اجتماعی، ادبی
زیر نظر: یعقوب گریگوریان
آدرس: ایران، تهران
صندوق پستی ۱۶۷۶۵/۱۳۳۶
تلفن و فکس: ۸۳۹۷۱۹
چاپ و لیتوگرافی از: هاشمیون ۷۶۵۰۲۸